տուԹեան. ոչ ի բնագրէն, այլ միայն գրեալ ինչ, յորմէ լինելոցն էր բնագիրն։ Գտանի ի Լէօպոլիս Թուղթ սորին առ Լէօպոլսեցիս, ի Կամէնիցու յղեալ. բայց զԹիվն ոչ գտաք. աստէն զՄեսրոպն եդաք։ Ցետ սոցա պարապ մնաց աԹոռն մինչև ցՏէր Նիկողայոսն։

1607. ՌԾԶ. Կարապետ արքեպիսկոպոսն մեր մեռանի։ — Եղուռ։

1609. ՌԾԸ. Պարոն Միխնոյ Կամէնիցու երեսփոխանն՝ որ զեկեղեցին Ս. Նիկողայոսի նորոգեաց, և զհրաշալի պաղատն իւր քարաշէն ի դէմ նորա շինեաց, անզաւակ մեռաւ։

1621. ՌՀ. Եազլովցայու Աստուածածնի և վանքն Ս. Գրիգորի Լուսաւորչին՝ յայսմ ամի կատարեցաւ, կամ վերատին նորոգեցաւ ի բարեպաշտից, իսկ մատուռն Աւետման՝ ի Պարոն Պօկտան Սբէնտովքիչէն, Թվին Հայոց ՌՃԶ, 1657։ — Ցիշատ։

1624. ՌՀԳ. Տէր Մելքիսեթ կաթողիկոսն ընկղմեալ ի բազմութիւն պարտուց, որք մինչեւ ց՝600 Թումանս, զԱհակ եպիսկոպոսն եղբօրորդին իւր՝ կաթողիկոս օրհնեաց. և ինքն աստ և անդ չրջելով ի ժողովել զդրամս, և իբրեւ անյոյս մնաց՝ գնաց ի Լեհաստան։

1626. ՌՀԵ. Մելքիսեթ կաթողիկոսն ժամանեալ ի Լեհս՝ ի Լէօպոլիս, և գտեալ զաթոռն պարապ, ձեռնադրէ զաբեղայ Տէր Նիկողայոսն Թորոսովիչ՝ եպիսկոպոս Հայոց Լեհացւոց, և տայ նմա առնել զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, ընդդէմ կամաց ժողովրդեանն, որ դեռ եւս հերձուածող էր։ — Կոնտակ։

1627. ՌՀԶ. Յակոբ քահանայ Եւդոկիացի (Թոխաթեցի) եկեալ ի Լեհաստան պանդխտական՝ ի քաղաքն Զամոսցայ գալով, զրովանդակ 150 Սաղմոսն Դաւթի՝ գեղեցիկ և քաղցր ոճով մեկնօրէն ոտանաւորս արար. նա և զբազում խօսս Ս. Գրիգորի Նարեկացւոյն՝ տաղաչափականս շարադրեաց. այլ և զզանազան տաղս վասն կենաց մարդկան և զղջման, և այլն, յայսմ ամի աւարտեաց. զայսոսիկ զորս առ ձեռս ունիմ։

Մելքիսեթ կաթողիկոսն ի Լէօպոլսէ զայ յԵազլովցայ, ընդ իւր ուղեկից ունելով զՆիկողայոս արքեպիսկոպոս, որում տուեալ զգիր բանադրանաց, փետր. 15, ի վերայ Լէօպոլսեցւոցն՝ դարձուցանէ յաթոռն. և ինքն չուէ ի Կամէնից. ուր՝ մարտի 5, ձեռնադրէ եպիսկոպոս զԹորոս սրեղայն, երբեմն կանամբի, Կամէնցացի. առնէ զկտակ, մարտ 14, որով զաթոռն Էջմիածնի յանձնէ Իսահակ կաթողիկոսին՝ եղբօրորդւոյ իւրում. վճարէ զկեանս իւր ի մարտի 18. և թաղի յորմն եկեղեցւոյն Աւետման Ս. Աստուածածնին, զոր ինքն էր սրբագործեալ, ըստ կոնտակի իւրում։

Նիկողայոս արքեպիսկոպոսն դարձեալ ի Լէօպոլիս, դաշամբք ձեռնադրաց